## 1. ՄԵԹՈԴԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

• *Մանրածախ առևտրի շրջանառությունը* բնակչությանը կանխիկ դրամով վաճառված սպառողական ապրանքների արժեքն է`անձնական սպառման կամ տնային տնտեսությունում օգտագործման համար: Բնակչության առանձին խմբերին զեղչերով վաճառված ապրանքների արժեքները մանրածախ առևտրի մեջ ներառվում են իրենց ամբողջ ծավալով:

Մանրածախ ապրանքաշրջանառության ծավալի ցուցանիշը ձևավորվում է խանութների, կրպակների, հանրային սննդի կազմակերպությունների, սպառողական ապրանքների շուկաների, գյուղատնտեսական արտադրանքի շուկաների և առևտրի իրականացման այլ կազմակերպությունների միջոցով իրականացված ապրանքաշրջանառության հիման վրա:

Խանութների մանրածախ ապրանքաշրջանառութ-յունը որոշվում է դրանց կողմից բնակչությանը, հիմնարկներին և կազմակերպություններին վաճառված ապրանքների ծավալի վերաբերյալ ստացված հաշվետվական տվյալների և կատարված լրահաշվարկի հիման վրա:

Հանրային սննդի ապրանքաշրջանառությունը ներառում է բնակչությանը վաճառված սեփական խոհարարական արտադրանքի, ինչպես նաև գնովի, առանց խոհարարական վերամշակման և տեղում սպառման համար նախատեսված արտադրանքի ապրանքաշրջանառությունը:

Պարենային, ոչ պարենային և խառը սպառողական ապրանքների շուկաներում վաճառված ապրանքների ծավալը որոշվում է վիճակագրական հաշվետվությունների տվյալներով և փորձագիտական լրահաշվարկի հիման վրա:

Քաղաքային գյուղատնտեսական արտադրանքի շուկաների ապրանքաշրջանառության ծավալը որոշվում է վիճակագրական հաշվետվությունների տվյալների և կատարված դիտարկումների արդյունքներով:

Կրպակների ապրանքաշրջանառությունը որոշվում է կատարված դիտարկումների տվյալներով:

Ապրանքային ռեսուրսները որոշվում են հաշվեկշռային մեթոդով` սպառողական ապրանքների արտադրության, ներմուծման, արտահանման և դրանց պաշարների փոփոխման վերաբերյալ տվյալների հիման վրա:

Մանրածախ ապրանքաշրջանառության ֆիզիկական ծավալի ինդեքսը հարաբերական ցուցանիշ է, որը բնութագրում է համեմատելի ժամանակաշրջաններում մանրածախ ապրանքաշըր-ջանառության ծավալի փոփոխությունը` համադրելի գներով:

Ապրանքային պաշարները յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված ապրանքաշրջանառություննն է օրերով, որը որոշվում է որպես առևտրական

## 1. МЕТОДИЧЕСКИЕ ПОЯСНЕНИЯ

• *Оборот розничной торговли* представляет собой стоимость проданных населению за наличный расчет потребительских товаров для личного потребления или использования в домашнем хозяйстве. Стоимость товаров, проданных отдельным категориям населения со скидкой, включаются в оборот розничнной торговли в полном объеме.

Показатель объема розничного товарооборота формируется на основе товарооборота, осуществляемого через магазины, киоски, предприятия общественного питания, рынки потребительских товаров, рынки сельхозпродуктов и другие объекты.

Розничный товарооборот магазинов определяется на основе представленных ими отчетных данных об объеме товаров проданных населению и предприятиям а также на основе дополнительного расчета.

Оборот общественного питания включает стоимость проданной населению собственной кулинарной продукции, а также покупных товаров, проданных для потребления на месте без кулинарной обработки.

Объем товаров, проданных на рынках продовольственных, непродовольственных и смешанных потребительских товаров определяется по данным статистических отчетов и на основе экспериментального дополнительного расчета.

Объем товарооборота на городских рынках сельскохозяйственных продуктов определяется по данным статистических отчетов и на основе наблюдения.

Объем товарооборота киосков определяется путем статистического наблюдения.

Товарные ресурсы определяются балансовым методом на основе данных о производстве, ввозе и вывозе потреби-тельских товаров и изменении их запасов.

Индекс физического объема оборота розничной торговли относительный показатель характеризуюущий изменение оборота розничной торговли в сравнимых периодах в сопоставимых ценах.

Товарные запасы на 1-ое января каждого года, рассчитанные по дням товарооборота, исчесляются как отношение среднего объема товарных запасов за месяц к однодневному тобарообороту торгующих организацией за этот месяц.

• *Объем услуг населению* отражает объем потребления населением различных видов услуг и статистически измеряется суммой

կազմակերպությունների ապրանքային պաշարների միջին ամսական ծավալի և տվյալ ամսվա ապրանքաշրջանառության 1 օրվա ծավալի հարաբերություն:

- ***Բնակչությանը մատուցված ծառայությունների ծավալն*** արտացոլում է բնակչության կողմից սպառման ծավալը և վիճակագրորեն չափվում է մատուցված ծառայությունների դիմաց վճարված դրամական միջոցների գումարով: Ընդ որում, վճարը կարող է կատարվել ինչպես անմիջականորեն սպառողների կողմից, այնպես էլ այն կազմակերպության միջոցով, որտեղ աշխատում է տվյալ սպառողը (սպառած ծառայությունների ծախսերի լրիվ կամ մասնակի փոխհատուցման կամ վճարման գումարի չափով):

Բնակչությանը մատուցվող ծառայությունների ծավալի ցուցանիշը ձևավորվում է կենցաղային, մարդատար տրանսպորտի, կապի, բնակարանային-կոմունալ տնտեսության, մշակույթի, զբոսաշրջության և էքսկուրսային, ֆիզկուլտուրայի և սպորտի, բժշկական բնույթի, առողջարանների և հանգստյան տների, իրավական բնույթի և բանկերի, կրթության համակարգի և այլ ծառայություններից:

Բոլոր տեսակի ծառայությունների հաշվառումն իրականացվում է դրանց մատուցման պահին բնակչությունից ստացված փաստացի վճարի չափով (անկախ վճարի ձևից):

денежных средств, уплаченных потребителем за оказанные ему услуги. При этом оплата может производиться как самим потребителем, так и организацией, в которой работает данный потребитель, полностью или частично компенсирующей или оплачивающей расходы по потреблению им услуги.

Объем услуг населению, формируется от следующих видов услуг; бытовых, пассажирского транспорта, связи, жилищно-коммунального хозяйства, культуры, туристско-экскурсионных, физкультуры и спорта, медицинских, санаторно-оздоровительных, правового характера и банков, услуги системы образования, другие услуги.

Учет всех видов услуг осуществляется в размере фактической оплаты населением на момент их предоставления (независимо от формы оплаты).